

Գագիկ Գվիդոնի Սարգսյան - ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Գվիդոնի Սարգսյանը ծնվել է 1950թ. հունվարի 20-ին Երևան քաղաքում, ծառայողի ընտանիքում: 1967 թ. ավարտել է Երևանի թիվ 1, Ստ. Շահումյանի անվ. միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել և 1972թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, ստանալով պատմաբան-վիմագրագետի մասնագիտություն:

1972թ. հոկտեմբեր ամսին անցել է աշխատանքի ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնում որպես ավագ լաբորանտ, այնուհետ՝ կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող, ավագ գիտաշխատող:

1986թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն «Պատմական Նիզ և Վարաժնունիք գավառների վիմական արձանագրությունները» թեմայով:

1991-1998թթ. տեղափոխվել է աշխատանքի ՀՀ կառավարությանն առնթեր Հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչություն՝ բաժնի պետ, վարչության պետի տեղակալ, վարչության պետ:

1998թ. փետրվարին վերադարձել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտ՝ վիմագրության բաժնի որպես ավագ գիտաշխատող: 2001թ. մարտին նշանակվել է ինստիտուտի գիտնական քարտուղար, 2006թ. նոյեմբերին՝ փոխտնօրեն, վիմագրության բաժնի վարիչ:

Գ.Սարգսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ վիմագրագիտությունը, միջնադարյան Հայաստանի պատմության ամենատարբեր հարցեր, պատմամշակութային հուշարձանների պահպանության և ուսումնասիրության խնդիրներ:

Մասնակցել է Վահանավանքի, Արտաշատի, Սպիտակի վիմափոր բնակավայրի հնագիտական պեղումներին, 1979-1989 և 1996 ու 2008թթ. ղեկավարել է Թեղենյաց վանքի, 2012-2013թթ. Միրաքի վաղ միջնադարյան եկեղեցու պեղման աշխատանքները:

Գիտական պրպտումների արդյունքում հրատարակել է մոտ 70 գիտական աշխատություններ, այդ թվում հեղինակած և համահեղինակած 3 մենագրություն.

Պատրաստել է հրատարակության «Դիվան հայ վիմագրության» Կոտայքի մարզի պրակը: